Ռադիկ Մարտիրոսյանը՝ Ակադեմիայի նախագահ

Հակառակ տարածվող լուրերի ու կանխատեսումների՝ Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահի՝ երեկ նշանակված ընտրությունները չհետաձգվեցին ու չտապալվեցին: Ընտրության արդյունքում ԳԱԱ նախագահ ընտրվեց ԵՊՀ նախկին ռեկտոր, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը:

Լուս.՝ ԳԵՐՄԱՆ ԱՎԱԳՅԱՆԻ

Հարկ է նշել, որ ԳԱԱ նախագահի պաշտոնի համար առաջադրվել էին երեք թեկնածուներ. ԳԱԱ Մեխանիկայի ինստիտուտի տնօրեն Լենսեր Աղալովյանը, ԳԱԱ գիտական քարտուղար Էդուարդ Ղազարյանը և ԵՊՀ նախկին ռեկտոր Ռադիկ Մարտիրոսյանը: Վերջինիս թեկնածությունն առաջադրել էր ԵՊՀ պրոռեկտոր, ակադեմիկոս Էդուարդ Չուբարյանը: Է. Ղազարյանի թեկնածությունն առաջադրել էր ակադեմիկոս Վանիկ Զաքարյանը, իսկ Լ. Ղազարյանինը՝ ակադեմիկոս Սերգեյ Սարինյանը: ԳԱԱ 80 ակադեմիկոսներից և 18 թղթակից անդամներից քվեարկությանը մասնակցեցին 79 ակադեմիկոսներ և թղթակից անդամներ: Նիստին մասնակցում էր նաև կրթության և գիտության փոխնախարար Արտակ Սահիրադյանը: Լ. Աղալովյանի՝ ԳԱԱ նախագահ դառնալու օգտին քվեարկել էին 35, դեմ էին նույնպես 35 անձինք, գիտական քարտուղար է. Ղազարյանի թեկնածությանը հավանություն էին տվել 36 անձ, դեմ էր արտահայտվել 37-ը: Իսկ ահա ԵՊՀ նախկին ռեկտոր Ռ. Մարտիրոսյանի թեկնածությանը կողմ էին արտահայտվել 46, դեմ՝ 27 մարդ, որի շնորհիվ էլ Ռ. Մարտիրոսյանը դարձավ ԳԱԱ նախագահ: Նշենք, որ համաձայն ԳԱԱ կանոնադրության, քվեարկության մասնակիցը կարող է նույն կերպ քվեարկել բոլոր թեկնածուների դեպքում: Եվ քվեարկության վերը նշված պատկերն էլ վկայում է այն մասին, որ ակադեմիկոսներից շատերը միանգամից կողմ կամ դեմ են քվեարկել մեկից ավելի թեկնածուների: *«Մենք պետք է վերականգնենք մեր գիտության բարձր վարկն աշխարհում»*,- քվեարկության արդյունքների ամփոփումից հետո հայտարարեց ԳԱԱ նորընտիր նախագահը՝ հավելելով, որ այսօր էլ կան բարձր մակարդակով արվող հետազոտություններ, սակայն աստիճանաբար նրանց բազան փոքրանում է: *«Ես իմ ձեռքը մեկնում եմ բոլորին՝ նախևառաջ ակադեմիայի անդամներին, ինստիտուտների տնօրեններին... Ով շահագրգռված է, որ մեր գիտությունը զարգանա, մենք հաջողություններ ունենանք, նա իմ դաշնակիցն է: Իսկ ովքեր զբաղված էին բարդ մթնոլորտ ստեղծելով, երևի թե նրանց հետ ես չեմ կարող դաշնակից լինել»*,- նշեց Ռադիկ Մարտիրոսյանը: Վերջինս, անդրադառնալով իր առաջիկա քայլերին՝ նշեց, որ նախ պետք է բոլոր հիմնարկներում շատ լավ ուսումնասիրեն գիտական հետազոտությունները. ինչպիսի՞ն են նրանք, ի՞նչ մակարդակ ունեն, ի՞նչ տեղ ունեն այսօրվա համաշխարհային գիտության ասպարեզում: Եվ երբ այս ամենի արդյունքում էլ կորոշվեն հիմնական այն ուղղությունները, որոնք պետք է աջակցություն ստանան: Ռ. Մարտիրոսյանի խոսքերով՝ այդ ծրագրերի իրականացման համար պետական հովանավորությունը քիչ է, և պետք է այլընտրանքային միջոցներ գտնել: Հետաքրքիր է, իսկ ի՞նչ կարծիքի է ԳԱԱ նորընտիր նախագահը՝ ԳԱԱ-ն բարեփոխելու՝ ՄԱԿ-ի առաջարկած ծրագրի մասին: *«Ճիշտն ասած, ես մինչև այսօր չեմ ծանոթացել ՄԱԿ-ի այդ ծրագրին*,- նշեց Ռ. Մարտիրոսյանը՝ միաժամանակ հավելելով,- *ծրագրեր շատ կան ամբողջ աշխարհում՝ Ռուսաստանում և ԱՊՀ այլ երկրներում, բայց մենք պետք է մեր ծրագիրն ունենանք՝ հաշվի առնելով առողջ, առաջադիմական բոլոր այն գաղափարները, որոնք նպաստում են գիտության զարգացմանը»*: Ռ. Մարտիրոսյանը խոստանում է, որ ԳԱԱ նախագահության ամբողջ գործունեությունը կլինի բացարձակ թափանցիկ: Նա անդրադարձավ նաև «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքին, նշելով, որ իր կարծիքով՝ դա գիտական կազմակերպությունների կարգավիճակի մասին լավագույն տարբերակը չէ: Հիշեցնենք, որ համաձայն այդ օրենքի, 65 տարին լրացած ոչ մի անձ իրավունք չունի պետական ոչ առևտրային կազմակերպությունում գործադիր ղեկավարի պաշտոն զբաղեցնել, իսկ ԳԱԱ-ն հենց այդպիսի կազմակերպություն է: Անդրադառնալով այս խնդրին՝ Ռ. Մարտիրոսյանը նշեց, որ ընդամենը 1-2 շաբաթ առաջ Իտալիայի պես երկրի նախագահ ընտրեցին 81-ամյա մի մարդու: *«Դա ընտրողների խնդիրն է: Ընտրվի պաշտոնների տարիքային սահմանափակումը հակասահմանադրական է»*,- հայտարարեց նա: Վերջինս, անդրադառնալով ակադեմիկոս Հանրի Ներսիսյանին, նշեց, որ նրան շատ նորմալ է վերաբերվում: *«Հանրի Ներսիսյանը լավ գիտնական է: Նա հայտնի մաթեմատիկոս է»*,- նշեց Ռ. Մարտիրոսյանը:

ՌԱՖԱՅԵԼ ԹԵՅՄՈՒՐԱԶՅԱՆ